ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
_____ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ
01.06.2026թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՐԾԻՔ

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 25.05.2026 թ. նիստին մասնակցում էին հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դոլուխանյանը, Գ.Մարդյանը:

Քննարկվում էր Ալինա Ամբիկի Ղարիբյանի «Կանանց կերպարները «Սասնա ծռեր» էպոսում» թեկնածուական ատենախոսությունը:

«Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Այդ հոյակապ էպոսն ըստ արժանվույն գնահատել են այնպիսի նշանավոր էպոսագետներ, ինչպիսիք են՝ Հովսեփ Օրբելին, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Մանուկ Աբեղյանը, ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանն ու շատ ուրիշներ:

Ալինա Ղարիբյանի «Կանանց կերպարները «Սասնա ծռեր» էպոսում» ատենախոսությունը կառուցված է արդեն գիտական շրջանառության մեջ գտնվող էպոսագիտական նյութերի հստակ իմացությամբ: Սակայն այն անպայմանորեն բերում է նորություն, որովհետև բանագիտական հմտությամբ բացահայտված են «Սասնա ծռեր» էպոսում հիշատակվող հիմնական և դրվագային մասնակցություն ունեցող կանանց կերպարները:

Ատենախոսության մեջ ամեն մի կերպար բնութագրվում է իր էության մեջ՝ մեկտեղված հայ ազգի տարբեր ժամանակների՝ դեպի կինն ունեցած պատկերացումների հետ: Դրանք սկսվում են առասպելական վաղնջական

ժամանակներից և հասնում են մինչև X դար, երբ Հայաստանի պետականությունը ներկայացնում էին երկու թագավորություններ՝ Արծրունիներն ու Բագրատունիները:

Բնականաբար կանանց կերպարների մեկնաբանումը սկսվում է Ծովինարից, որը Սասնա դյուցազունների նախամայրն է:

Ատենախոսը իր հետազոտական աշխատանքում քաջատեղյակ է այնպիսի հմուտ էպոսագետների ուսումնասիրություններին, ինչպիսիք են Արուսյակ Սահակյանը և Ալինա Փահլևանյանը, որոնք բացահայտել են հայկական հերոսական էպոսի առասպելական ընդերքն ու կանանց կերպարների ստեղծման ենթաշերտերը:

Ատենախոսը մատնացույց է անում հայ դյուցազունների կանանց՝ Դեղձուն Ծամի, Արմաղանի, Խանդութի, Գոհարի կերպարներում եղած հեթանոսական մտածողության արձագանքները:

Ալինա Ղարիբյանը ծանոթ է բոլոր այն հայ բանագետների կարծիքներին, որոնք անդրադարձել են հայկական էպոսի կանանց կերպարներին: Դրանցից մեկն է անվանի էպոսագետ Սարգիս Հարությունյանը, որը Դեղձուն Ծամի, Խանդութի, Իսմիլի կերպարներում տեսնում է վիշապամարտի կանանց գծերը:

Ատենախոսության մեջ բացի պատմահամեմատական, կառուցվածքաբանական, առասպելաբանական, տիպաբանական մեթոդներից, կիրառվել է հոգեվերլուծականը:

Շատ ուշագրավ է ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ «Ինքնազոհության վիպական դրսևորումն Արմաղանի կերպարում» վերնագրով: Անձնազոհության խնդրում ատենախոսն իրավացիորեն Արմաղանին կապում է նախամայր Ծովինարի հետ: Զոհողության հիմքում երկու դեպքում էլ դրված է հայրենիքի ապագայի հարցը:

Ֆրեդերիկ Ֆեյդին «Սասունցի Դավիթ» վիպերգի համահավաք բնագրի ֆրանսերեն թարգմանության մեծարժեք առաջաբանում ունի հետևյալ կարևոր դիտարկումը. «Արմաղանը նախընտրում է պետական շահի համար մի երդմնազանցություն, որ արժենում է երկրային կյանքը և վտանգի է ենթարկում նրա հավերժական կյանքը» (տե՛ս Ա.Դոլուխանյան, «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ», Երևան, 2008, էջ 184):

Իրավացի է ատենախոսը հետևյալ եզրահանգման մեջ. «Այսպիսով, պետք է արձանագրել, որ երկրորդ ճյուղի գլխավոր հերոսուհու՝ Արմաղանի կերպարը չնայած աչքի է ընկնում հարուստ մոտիվաշարերով և մոտիվներով, սակայն այն իր մեջ խտացնում է Սասնա կանանց բնորոշ հիմնական և կարևոր առանձնահատկությունները» (տե՛ս ատենախոսություն, էջ 131):

Բոլոր դեպքերում էպոսի ամենավառ կերպարը Խանդութն է, որը հանդես է գալիս նաև Գարեգին Սրվանձտյանցի կատարած վիպերգի առաջին գրառման մեջ:

Հենց այստեղ է, որ Խանդութը խոսում է իր ուժի մասին՝ հանդուգն ձևով դիմելով Դավթին. «Զէվելի պագն հորի՞ առար: Դու քո պապու կտրիճն ես, ես եմ պապու» (տե՛ս Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 105): Իրոք, բոլոր կանանց մեջ Խանդութը ներկայացված է ամենաառասպելական գծերով:

Շատ ճիշտ է նկատված, որ թեև Գոհարը սասունցի չէ, սակայն Հալաբա թագավորի աղջիկն իր մեջ ներառում է Խանդութի՝ ամուսնու նկատմամբ ունեցած անսահման հավատարմությունը:

Էպոսում կան օտարազգի կանայք, որոնցից մեկն է Իսմիլ Խաթունը: Սա բարդ կերպար է և արձագանքն է այն իրողության, որ տարբեր ազգերի թագավորական ընտանիքների միջև եղել են ամուսնական կապեր: Իսմիլ խաթունը խնամում է Դավթին. պատահական չէ, որ «ողորմիների» մեջ հիշատակվում է նրա անունը:

Ատենախոսն այստեղ վերստին անդրադարձ ունի միջազգային բանագիտության մեջ քննության առարկա դարձած երկվորյակների խնդրին:

Ատենախոսը Զմշկիկ Սուլթանին որակում է որպես սիրո և ռազմի դիցուհի, որը վրեժխնդրությամբ սպանել է տալիս Դավթին՝ երդմնազանց լինելու պատճառով: Զմշկիկ Սուլթանի կերպարը զուգահեռվում է այլ ազգերի համանման հնագույն դիցապատմական հերոսուհիների հետ:

Ատենախոսը թվարկում է Ինդրա, Շամիրամ, Աֆրոդիտե, Կիբելե: Ատենախոսի ուշադրությունն ենք հրավիրում ասորաբաբելական «Գիլգամեշ» դյուցազնավեպի գլխավոր հերոսուհի Իշտարի վրա, որի հոյակապ տաճարն այսօր փառահեղ վերականգնված է և գտնվում է Բեռլինի Պերգամոն թանգարանում:

Մանրամասնորեն բնութագրված է նաև Ձենով Օհանի կինը՝ Սարյեն, որի կերպարն ու վարքագիծը մերժված է էպոսում: Էպոսի գլխավոր կանայք, իրենց նվիրումով, հավերժացնում են հայ ազգի վերաբերմունքը դեպի ընտանիքը:

Ատենախոսության մեջ ուշագրավ ձևով նաև մեկնաբանված է Արտատեր պառավը, որը նպատակաուղղում է Դավթի ուժը: Արտատեր պառավը կապվում է հողի պտղաբերության, վար ու ցանքի, նաև մանկան դաստիարակության հետ:

Ալինա Ղարիբյանը երկար տարիներ է աշխատել իր ատենախոսության վրա: Նրա առաջին հոդվածը տպագրվել է 2014-ին, տասներորդը՝ 2026-ին:

Ատենախոսության մեջ օգտագործված է անհրաժեշտ քանակով տեսական ու բնագրային նյութ: Ատենախոսությունը տպագրելու դեպքում օգտակար կարող է լինել ոչ միայն բանասիրական ֆակուլտետների, այլև այլ բաժիններում սովորող ուսանողներին: Այն կարող է հատուկ դասընթացի նյութ դառնալ բանասիրական, պատմության, հոգեբանության ֆակուլտետների մագիստրատուրաներում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ալինա Ամբիկի Ղարիբյանի «Կանանց կերպարները «Սասնա ծռեր» էպոսում» թեմայով ատենախոսությունը հաջողված է: Այն համապատասխանում է Ժ-01.05.- «Բանահյուսություն» մասնագիտության թվանիշին, և նրա հեղինակը լիովին արժանի է ստանալու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Ատենախոսության քննարկմանը ելույթ ունեցան հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դոլուխանյանը, Գ.Մարդյանը:

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՆՐԱ ԴԱՍ.ՄԵԹ. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ, ԲԱՆ.ԳԻՏ.ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ՝ **ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ**

Պրոֆեսոր Ա.Դոլուխանյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՀԱԿՈԲ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**